

**ՊՂՏՈՐԱԳԵՏԸ ԵՎ ԻՐ ԱՎԱԶԱՆԸ**  
**Սիլվա Մինասյան**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*  
*ԱրՊՀ*

Պղտորագետն Արցախի հորդահոս Տրտուի՝ Թարթառի միջին հոսանքի երկրորդ վարար վտակն է՝ Թրդեից հետո և ունի պղտորավուն ջուր ու մեծ ավազան՝ իրար փոխհաջորդող բարձունքներով, անդնդախոր ձորերով, տանելի թեքությոներ ունեցող լանջերով ու սակավ հարթությոներով: Պղտոր գետը հայերենում հայտնի է նաև ՏՂՄՈՒՏ անվամբ: Մեր նպատակն է պատմական, լեզվաբանական և աշխարհագրական մի շարք տեղեկություններով ներկայացնել Պղտորագետի մեծ ավազանը, որովհետև առ այսօր այդ գետի մասին հրապարակված ոչ մի տեղեկություն և նկարագրություն չկան, բացի տողերիս հեղինակի «Չափար՝ Հակառակաբերդ» գրքում եղած սուղ գրառումից:<sup>1</sup>

Պղտորագետը (արցախյան խոսվածքով՝ Պղտուրակյետ) ունի նաև Գյարաք երկրորդ անվանումը, որը վերջին հարյուրամյակում ավելի հաճախակի են գործածել տեղացիները, իբր ի հակադրություն Հաթերքի Պղտորագետի: Վերջինս նաև Պղտուրաճյուր՝ Պղտորաջուր էին կոչում՝ բարակ լինելու պատճառով: Խնդրո առարկա գետի նշված երկու անուններն էլ հայերեն բաղադրիչներով կազմված բառեր են: Պարզ, ընկալելի *Պղտորագետը* կազմված է *պղտոր* բաղադրյալ և գետ պարզ բառերից, որի *պիղոտ//պիղծ* բաղադրիչը հնչյունափոխված արմատ է (հնչյունափոխություններն են՝ շեշտի հետ կապված՝ *ի-ը* և հնչյունի պարզեցում կամ բարդեցում՝ *ծ-տ,ս*).<sup>2</sup>, իսկ –ՈՐ–ը վերջածանց է: Այդ ջուրը պղտոր է, որովհետև Մռով սարի հալվող ձյունից շատ է սնվում (ակունքի մոտ էլ վճիտ չէ): Հոսքի ժամանակ Մանանասարի՝ Աղդաբանի հյուսիսային մասի բարձրադիր Նժույգասարի ստորոտում, մոխրանման հունքից ավելի պղտորվելով, տիղմահամ է դառնում: *Գյարաք* անվանումը կազմված է *գար* գայռ (ցեխ) չստուգաբանված արմատից<sup>3</sup> (որի ուրարտական՝ նաիրյան լինելը շատ լեզվաբանների կողմից հավանական է համարվում) և –թ մասնիկից (վերջին ա-ն բարեհնչյունության համար նախորդի համաբանությամբ ստեղծված ձայնավոր է): Արմատում հայերենին յուրահատուկ մի քանի հնչյունափոխություն է կատարվել՝ Գ-Գյ (Գ -Կ-Գյ՝ Արցախ-

<sup>1</sup> Մինասյան Ս., *Չափար (Հակառակաբերդ)*, Ստեփանակերտ, 2010, էջ 73:

<sup>2</sup> Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան, հ. IV (վերահրատարակություն)*, Երեւան, 1979, էջ 81, 91:

<sup>3</sup> Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան, հ. I (վերահրատարակություն)*, Երեւան, 1971, էջ 513:

յան բանավոր խոսքում խլացած Գ ծայնեղը վերականգնվել է գրավոր խոսքի շնորհիվ), ԱՅ-Ա, Ռ-Ր (*հագար*-գար՝ հնչյունափոխված *արար* բառի հետ կապը քիչ հավանականություն ունի, որովհետև որևէ այլ առնչակից իրողություն, կապված այդ լեզվի հետ, պարզաբանված չէ և ոչ էլ *գարա*՝ մեծ, սև ու նրան հաջորդող հնչյունափոխված *ք-ով* սկսվող կամ պարունակող որևէ ձևությամբ բաղադրության հետ կապ ունի): Պղտորագետի այս անվանումն իր ձախսափնյա պատմական Քրահունջ գյուղի Գյառավանդ (այրմ-քուրդ-թուրք-ադրբեջանցի ազերիների կոչումով՝ Քերեվենդ, Իմերեթ-Քյերեվենթ) անվամբ փոխարկվելուց հետո է ստացվել: Այդ նույն անվանումը նաև Դաշտային Արցախում կա, որտեղ հիմա այլադավաններն են բնակվում և երևակայում, թե իրենց ստեղծած անուններն են: *Գյառավանդ* անվան բաղադրիչները ևս ընկալելի են՝ նույն *գայռ* արմատը և իրանական *լանդ/վանդ-կապ* մասնիկը<sup>1</sup>, այսինքն՝ *ցեխի, տիղմի* հետ կապված, կապ ունեցող (Քրահունջի տեղանքում, ի հակադրություն Չափարի, հարթ տարածքները համեմատաբար շատ են և աղբյուրների ջրերը մնում են կանգնած՝ ճահճուտ ու լճակներ կազմած. հիմա էլ դեռ խողովակով քիչ ջրեր են տեղափոխված ու էլի մնում են նույն վիճակում):

Պղտորագետը Հակառակաբերդի՝ Չափարի շրջակայքի մեծ գետակն է: Թրդեն սկզբնավորվում է Մռովի բարձրադիր գագաթների հարավարևելյան, իսկ սա՝ արևմտյան ժայռերից ու այդ գետերի ավազանի ջրաժան սըռը ձևավորվում է Հաթերքի հյուսիս արևմուտքից ու ձգվում մինչև Մռովի ժայռուտը՝ Մանանասարից դեպի արևելք ձգվող բազուկի կտրուկ իջվածքի ուղղությամբ: Մռովի արևմտյան թևի ժայռաշարքերի երկու կողմերում ձևավորվում են ենթավտակներ՝ ճուխտակայետ՝ Ջուխտակագետ՝ *զուգահեռ գետակ* նաև ճուխտակաճյուր (*գետ*-ը բնիկ հայերեն արմատ,<sup>2</sup> *ջուր*-ը՝<sup>3</sup>, իսկ ջուխտակի *ջուխտ*՝ զույգ արմատը պահլավերեն, - ԱԿ-ը՝ ածանց)<sup>4</sup>, որը հետագայում այրմ-քուրդ-թուրք-ադրբեջանցի ազերիները Չայղոշա էին անվանում (Չայղոշա՝ թուրք.՝ *չայ* -գետ, երևի նաև հեղուկ, տեղում չմնացող նյութ. երևի ծագում է չինական *չայ*՝ աստծո խոտ, որից էլ նրա *թուրմը*՝ բոլորիս հանրածանոթ նույնարմատ *թեյ* ըմպելիքը<sup>5</sup>. իսկ *ղոշա*՝ զուգահեռ): Գետակները Մռովից քիչ հարավ իջնելով, միանում են ու պահպանելով այդ անունը՝ ալպյան մարգագետիններից թեքվում են քիչ վար՝ հարավ-արևելք ուղղությամբ ու, սրընթաց մտնելով

<sup>1</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 394, 635-636:

<sup>2</sup> Նույն տեղում, հ. I, էջ 537

<sup>3</sup> Նույն տեղում, հ. IV, էջ 134:

<sup>4</sup> Նույն տեղում, հ. I, էջ 134:

<sup>5</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. II (վերահրատարակություն), Երեւան, 1973, էջ 180:

անդնդախոր մթնածորը, վեր են ածվում Պղտորագետի: Մանանասարի բարձրագագաթ Նժույգասարի հյուսիսային ստորոտների անդնդախոր ձորերով դեպի արևելք հոսելով՝ այնուհետև ծունկ է տալիս՝ ոլորվում ու Գյարաք անունը մի ժամանակ «վաստակած»՝ Մանանասարից արևելք ձգվող բազուկի կտրուկ իջվածքի ստորոտով դեպի հարավ բացվող հովտով շարունակում է Չափարի արդի բնակելի թաղամասով: Նորից ծունկ է տալիս Մեծ Բլուրից՝ Սաղունց թունբից արևելք ձգվող ու Քաչալ՝ Բուսազուրկ թունբով վերջավորվող անդնդախոր ձորում (քիչ տեղ գրավող քայքայվող ավազուտ այդ գետավեժ բլուրը ժայռուտ է, և նրանով է Չափարի ճանապարհը ոլորվում քիչանձան բազուկից Տրտուի հովիտը փոխարկելով Մանանասարի հովտով: Արցախյան գոյապայքարի ժամանակ այդ տեղանքն ահավոր կրակակետ է եղել շրջակայքի համար, իսկ Չափարն ազատագրելիս՝ 1993 թ. փետրվար, այդտեղ նահատակվել են երեք տանկիստներ՝ երկուսը Վաղուհասից, մեկը՝ Չափարից՝ Դանիելյան Ռուբիկ Արամայիսի): Պղտորագետն այդտեղից դեպի հարավ առաջանալով, Գետավանի արևելյան մասում՝ Մեծ կամուրջից ներքև, լցվում է Տրտուն: Այդ գետաբերանն առաջ լայն տարածք էր զբաղեցնում՝ միշտ քանդելով իրենով անցնող ճանապարհը: Գետի հունը, հիմա Գետավանին կից լինելով, քիչ բարեկարգված է, ճանապարհի համար կամուրջ պատրաստված: Այդ ճանապարհը հնամենի ուղի է, որն առ այսօր էլ ձգվում էր դեպի Քրահունջը՝ Գյառավանդ, Ջարդախաչ ու Հաթերք (դա Հաթերքից դեպի Դադի վանք, Ծար, Քարավաճառ, Արքայական բաղնիքները՝ Տաք ջրերը ձգվող Թարթառի՝ Տրտուի աջափնյա հնամենի տերունական մեծ ուղու մի հատվածն էր, որը խորհրդային կարգերում ձախսափնյա էր դարձել՝ Մարտակերտ-Գետավան): Այդ փոքր կամուրջից (ի հակադրություն հինգ հարյուր մետր դեպի հարավ-արևմուտք գտնվող՝ Տրտուի վրայի Մեծ կամուրջի) հինգ հարյուր մետր դեպի Հաթերք, հին ու նեղ այդ տերունական ճանապարհի մոտ, Պղտորագետի ու Տրտուի անկյունագծի աննշան բարձունքի վրա Մովսեսի՝ Մյասունց վանքը, իջևանատունն էին, որն իսպառ քանդել են XX դ. 70-ականների սկզբին, իբր այդ ճանապարհը վերջնականապես բարեկարգելու համար, իսկ մնացորդ ամենափոքր քարն անգամ գործածվել է մի քանի գետավանցիների կողմից՝ շինարարության համար:

Պղտորագետին խառնվող աջակողմյան մեծ վտակը պաղպաջուն Արիքլուն է, որին նաև Չափարի գետակ են կոչում: Այն սկիզբ է առնում Մանանասարի վերին բարձրավանդակից՝ Նժույգասարի բյուրակնյա ստորոտից, որը նաև Բյուրակն՝ Բինգյոլ է կոչվում: Այս գետակը երկարությամբ թեև կարճ է՝ հազիվ չորս կիլոմետր, բայց բազմաթիվ պատվական աղբյուրներով է սնվում, կամ նրանցից ձևավորված առվակներով, ուստի

իր պարզ, սառնորակ ու քաղցրահամ ջրերով միշտ զարմացնում է անցորդին: Նրա մեջ համեղ կարմրախայտ ձուկ էր լինում, որն անգամ տեսանելի էր հեռվից (այդ գետակի ավազանի աղբյուրների մի մասը չափարցիների կողմից խողովակներով տներ տանելու, իսկ ամռանն էլ գետաջրով բանջարանոցները ոռոգելու պատճառով մի փոքր հատված երբեմն ցամաք է լինում, ուստի կես դար է, ինչ ձուկ հազվագյուտ է լինում): Իր հերթին Մանանասարի բարձրավանդակից ցած մասում այս գետակն ունի չորս փոքր ենթավտակ: 1. Չախակողմյանը՝ Մանանասարի՝ արևելք ձգվող բազուկի գոգանման լանջերի աղբյուրներից գոյացող ու ա) Գլգլացող աղբյուրով ձևավորվող և Մանանասարի բարձրավանդակի առաջին գառիվերի՝ Աստանբեյի դիքի աղբյուրովն ամբողջացողը, բ) Օջախից քիչ վեր, ճանճանոցի՝ Մեղվանոցի հարթությունից դեպի Գետակի իջվածքը գտնվող վարար աղբյուրը, գ) Գյուրգյիաթից ձևավորվող դեպի գյուղը ձգվող և Քուրախպոր՝ Փայայերի՝ Մեծ Գոմատեղերի ու գյուղի հյուսիսային մասի՝ Քարտաշի աղբյուրներովն ամբողջացողը, գ) գյուղամիջյան ներքևի ձորակի առափնյա վարար աղբյուրները: 2. Աջակողմյա վտակը. ա) Սղոզանի հարավային, արևելյան և արևմտյան, Հակառակաբերդի հյուսիսային լանջերից ձևավորվող ու Մեծ Խազազդարայի՝ հնամենի Սոխանանց տեղամասի աղբյուրներով ամբողջացող վտակ, բ) գյուղից վեր՝ Եթի Վանուն աղբյուրով ու այլ ջրերով առու, որը հիմա կիսացամաք է, գ) ներքևի վերջին հարթ տարածքում Տանձուն տակի առվանման վարար աղբյուրը (դրանք հունին շատ են կից, ուստի խառնվում են գետին ու վարարած ժամանակ էլ տակին մնում, ուստի անգործածական են, ճանաչողները միայն ամռանն են դրանից ջուր խմում, որովհետև պաղպաջուն ու քաղցրահամ են): Չափարի գետակը պարզ, քաղցրահամ ու բանջարանոցները վերին ու վարի առուններով ոռոգող գետակ է: Քանի որ ավազանը մեծ է՝ Մանանասար, նրանից արևելք ձգվող հարավահայաց երկար լանջ, Մանանասարի՝ Սղոզանով վերջավորվող հարավային բարձունք՝ Սոխանանց՝ Խազազի ձորահովտով (Խազազդարա), Հակառակաբերդի հյուսիսային լայնափեշ լանջերը, ուստի հեղեղումների ժամանակ շատ է վարարում, մարդաբոյից ավելի քարեր գլորում: Արիքլվի գետակն առաջ ջաղաց էր աշխատեցնում նաև վերևում՝ Երե ճեղացը՝ Սղոզանի ստորոտից քիչ վեր: XX դ. սկզբից բանջարանոց ոռոգելու պատճառով ամռանը բարակում էր, ուստի Պղտորագետից առու էին միացնում ու դրանով Չափարի Ներքե Գետամիջի ջաղացներն աշխատեցնում (հիմա միայն մեկ ջաղացի քար է երբեմն պտտեցնում): Ուներ մեկ բանուկ կանուրջ՝ դպրոցի ուղղությամբ գետամիջյան առաջին

թաղամասը երկրորդի հետ կապող: Հինա քանդված է, մի փոքր կամրջակ է քիչ վերևում դրված: Տարվա մեծ մասը, առանց կամուրջի, անցանելի է:

Արիքլու անվանումը երկու ձևով է մեկնաբանվում. 1. *արյան* գնով ձեռք բերած տեղանքը՝ արյուն+ք+լի, 2. *արհմերով*, քաջերի աշխատանքով լի տեղանք (պարսիկ՝ արի, անվան հետ կապ չունի): Այդ անվանումը միջին դարերում է ստացվել՝ XII դ.: Գետակից բացի՝ տեղանքը ևս այդպես է կոչվել այդտեղ մղված արյունահեղ ճակատամարտերի պատճառով՝ Սղսղանի ստորոտից՝ Սոխունանց տեղանքից մինչև Օջախը՝ հին Կրակատեղին՝ Թուխ մանկան, Վանատուրի, Եանեի սրբատեղին (Հակառակաբերդի հյուսիսային կողմով, Հինաս -Խազագի ձորակի հնամենի բանուկ ու մեծ, հինա սակավ գործածվող ուղին և Մանանասարի ճանապարհը այդ սրբատեղիից են ճյուղավորվում): Արիքլվի գետակին զուգահեռ բարձրանում է Մանանասարի ճանապարհը: Արցախյան գոյապայքարի ընթացքում մասնակի ընդհարումներ են եղել այդ գետակի ափերին: Գետի աջ կողմի ափամերձ ներքևի տան բակում մեծ ճանապարհի եզրին, թշնամու գնդակից զոհվել է Գասպարյան Արտոն՝ 1941-45թ.թ. ֆաշիզմի դեմ կռվում մարտիրոսված Մանգասար Սափարիի Գասպարյանի որդին:

Պղտորագետի հաջորդ աջակողմյան պարզ, բայց սակավաջուր վտակը Ակնաջուրն է (աղբյուրների ջրերի մեծ մասը խողովակներով տներն է տարված, որոշ բանջարանոցներ դրանով են ոռոգում):

Ակնաջուրը՝ Ըկնաճուրը//Դինակեն ճուրը, սկիզբ է առնում Հակառակաբերդի և Պողոս ճգնավորի բարձունքների՝ իրար մոտեցող լանջերի անկյունահատման գոգից և թեք ձորակով իջնելով, Մեծ Բլուրի՝ Սաղունց թունբի հյուսիսային ստորոտով, գյուղի հին ու նոր մեծ թաղամասերը իրարից խոր ձորով բաժանելով, թափվում է Պղտորագետը՝ ամենահին ու բանուկ ջաղացի մոտ, երեք Տնջրու ուղղությամբ՝ դպրոցից հարավարևելք գտնվող ձորաբերանի հովտում: Երկարությունը հազիվ երկու կմ է, թեև բարակ, բայց գյուղի հին թաղամասի կողմից առաջ շատ օգտագործվող ջուրն է եղել ու երկու փոքրիկ ջրվեժ ունի: Առաջինը հին թաղամասից նոր թաղամաս եկող վերին ճանապարհի տակին է՝ մեծ ընկուզենու մոտ՝ Կրովաց թախտի ժայռաստորոտում, իսկ երկրորդ ջրվեժը Շորշոր աղբյուրից քիչ վերև է. երեք մետրանոց ժայռից գեղեցիկ շիթերով ու անուշ ձայնով թափվում է սովերախիտ ծառերով եզերված ձորում (հիմա ամռանը շատ քիչ ջուր է այդ ջրվեժներից թափվում, որովհետև աղբյուրների մեծ մասը, ինչպես նշել ենք, ստորգետնյա խողովակներով տեղափոխված է տները): Լեռնային այս վճիտ ջրի տասից ավելի աղբյուրները ծառայում էին և են չափարցիներին: Չափ կողմի բարձրադիր Թամբանի ժայռաբուխ աղբյուրն ամենից վարարը, պաղպաջունն ու պատվականն է:

Յնուց թունգերով, իսկ հիմա երկաթե խողովակներով (կարճ ժամկետներով՝ նաև փայտե բարակ նովերով) ջրերը տարվել ու տարվում են տները, բանջարանոցները, այգիները: Ամենահին ժամանակներից Ակնաջրի աջ կողմից՝ գյուղի հին թաղամասի վերին ուղղության աղբյուրից, թունգերով՝ կավե խողովակներով, ջուր է տարվել Մեծ բլուրի՝ Սաղունց թունքի հյուսիսային մասի՝ ներկա թաղամասի դպրոցի դիմահայաց տեղի բրուտանոցը, որից հիմա ոչինչ չի պահպանվել՝ վարելահող դառնալու պատճառով (թունգերի վերջին մնացորդներից հանել էին նախորդ դարի հիսունականներին՝ վար անելիս. հիմա՝ տեխնիկայի դարում, այդ թեք լանջերն այլևս չեն մշակվում): Այդ առվին չափարցիները *ջուր* են կոչում՝ ի հակադրություն մոտակա գետակների ու Տրտու՝ Թարթառ վարար գետի: Անձրևների ու հեղեղումների ժամանակ Դահնակի ջուրը՝ Ակնաջուրը, վարարում է և վերին մասից՝ Հակառակաբերդի ստորոտից մինչև Հին շենի՝ հին թաղամասի հյուսիսային լանջերն ու ժայռուտը, խոշոր ու շատ քարեր է պոկում, գլորում ներքև: Թամբանի աղբյուրից եկող ջրերի խառնման տեղում, ուր բանուկ ճանապարհ էր, միշտ կամուրջ էր կառուցվում, որովհետև ուժեղ վարարումների ժամանակ անսպասելիորեն քանդվում էր, իսկ ճանապարհը շատ էր բանուկ. այդտեղով էին անցնում դպրոցականները, հարևան գյուղից՝ կոլտնտեսության գրասենյակային հարցերով պահանջներ ունեցողները և այլն (հիմա կամուրջ չի վերակառուցվում, որովհետև գյուղացիները վարչական գրասենյակներով հին թաղամասից տեղափոխվել են դպրոցի շրջակա նոր թաղամասը): Ակնաջուրը կազմված է հայերեն *ակն*<sup>1</sup> և *ջուր*<sup>2</sup> արմատներից: *Ակն* բառի երկրորդ իմաստն է արտահայտված՝ ակունք՝ *սկիզբ*, *աղբյուր*, այսինքն՝ ջուր, որի ակունքները լրիվ մոտ են և քարերից բխող աղբյուրի ջրեր են, իսկ *դահնակը* պարսկերեն բառ է, որն էլի նշանակում է *ակունք*, *սկիզբ* (բարբառում գործածական է՝ *առվի*, *ճրի դահնակը*. *ճրին դահնակը քանդվալ ա* և այլն):

Պղտորագետի մեջ աջ կողմից լցվող հաջորդ ջուրը գյուղի մուտքի (Գետավանից եկող ճանապարհով) Քյլմփու թաղամասի Տկղնոտու աղբյուրի բարակ ջրերն են: Քյլմփու բառը հիմա հասկանալի չէ, մթագնված է: Այն բնութագրում է տվյալ տեղանքը, այն է՝ Մեծ Բլուրից՝ Սաղունց թունքից դեպի Քաչալ թունքը՝ Պղտորագետի ձորակը, ձգվող բազուկը գյուղի նոր թաղամասի մուտքի կողմից նման է մարդու ձեռքի՝ բութ մատի և ցուցամատի բացվածքի: Այդ բացվածքը հայերենում կոչվում է քիլ և

<sup>1</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 106-108:

<sup>2</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 134

չափի միավոր է ճանաչվել<sup>1</sup> (երևի ուրարտական բառ է. ձեռքի չռած մատները մեկին ջղայնացած ուղղելով և է-ն շեշտելով՝ իբր անիծում են *առ* հրամայականի հետ սաստկացնելով՝ *քել է՛, առ է՛*, այսինքն՝ բոլոր *զգայարաններդ կորցնես*՝ կուրանաս, խլանաս, համրանաս և այլն. յուրաքանչյուր մատ խորհրդանշում է այդ զգայարանից մեկը և կարելի է *առ է* ձևը հասկանալ Աստօծ մոտ դատի գնաս, այսինքն՝ երկրից, իրական կյանքից վերանաս):

Չափս կողմից Պղտորագետը թափվող ջրերը քիչ և բարակ առուններ են, որոնք Մռովի ժայռանիստ ստորոտների հարավահայաց լանջերից ձևավորվում, իրար միանում և Կվենքի՝ Երե Քղքատըղի՝ Սև քաղաքի աղբյուրներով քիչ հորդանալով, արևմտյան ու արևելյան երեք առվակներով լցվում են գետը (3-4 կմ երկարությամբ. արևմտյանը՝ կարճավուն): Քրահունջի գետաեզր բարձունքից և երեք տնջրու կողմից մեկական աղբյուրների ջրեր և մի առվակ՝ ճահճուտների ջրերից գոյացած, քիչ ներքևի ձորակում է խառնվում: Ափամերձ աղբյուրները աջ ու ձախ կողմերում բազմաթիվ են:

Պղտորագետի միջին հոսանքից քիչ ցած, աջ ափի բնակելի տարածքում հիմա Չափարի նոր թաղամասն է՝ իր թեքությամբ ու քիչ առաջ ձգվող լեզվականման սանդղահարթակներով (Չափարի նոր ենթաթաղամասերը, ջաղացի ջուրը վերականգնելիս, չորս գետակներով են կտրտվում, իսկ այնպես՝ երեք, ուստի Գետամեջեր անվան գործածությունը սովորական է):

Պղտորագետի վրայի բարվոք միակ կամուրջը դպրոցից ներքև է՝ միակ ջաղացի ուղղությամբ, որով կարող է մեքենա անցնել: Գետի այդ ձախ կողմի բարձունքին Քրահունջի հնամենի գերեզմանոցն է, որտեղով անցնում է ճանապարհը և ուր հիմա ապրում են չափարցիներ:

Չափարի երեք սոսիները՝ տնջրիները (չինարի, որոնց տարիքը հազիվ հինգ հարյուր կլինի) այդ կամուրջից քիչ ներքև են, աղբյուրի մոտ: Այդտեղ է նաև ջաղացներից մեկի փլվածքը (այդտեղով էր անցնում նաև հին ճանապարհներից մեկը, որի կամուրջը վաղուց էր գետը տարել):

Պղտորագետի միջին ավազանի ձախ ափին՝ Մռովի ստորոտից ձգվող լանջին հնամենի Կվենք// Փիրփայա // Երե Քղքատըղը// Սև քաղաքն էր: Այս տեղանքը գտնվում է Մռովի ալպյան մարգագետիններից դեպի Պղտորագետը՝ Գյարաքը, իջնող լանջի մեծատարածք, երկարավուն սարավանդում և ընդգրկում էր նաև նշված գետի նույն ուղղության հար-

<sup>1</sup> Աճառյան Յր., Հայերեն արմատական բառարան, հ. IV (վերահրատարակություն), Երեւան, 1977, էջ 578:

թավուն հովիտը: Այդտեղ՝ գետի վրա, եղել են ջաղացներ, ունեցել են հանդամասեր, այգիներ, որոնց մեծ մասը նույնիսկ խորհրդային կարգերում մշակվում էր, տեխնիկայի զարգացման պատճառով մեքենայացվել են դաշտային աշխատանքները, ուստի այդ թեք լանջային հանդամասերը դուրս են մնացել, իսկ հիմա՝ բարձիթողի են: Այդտեղի տանձենիներին չափարցիք մեղրատանձի են կոչում (այդպիսի տանձ կա նաև Սաղունց տանձուտում՝ Մեծ բլուրի արևելյան ստորոտում): Մանր, երկար կոթերով, հասնելիս վառ դեղին գույնի ու զգլխիչ բույրով պտուղներ են (ավանդաբար ասում են՝ *Չենց էտ տանձը հսնըմ ա՝ Տրտուկի կոխկեն կորած հեյվանն էլ տրեղ կքթենաս*): Այդ տեղանքում հատկապես գետամերձ սարավանդում, զենքի արտադրությամբ զբաղվող դարբնոց կար՝ իր զինանոցով, իջևանատնով, տիրոջ դրյակով, որից հիմա միայն մեծ սալաքարեր, հիմնամասեր, պեկեր՝ փոսեր ու տիրոջ՝ օրհասական պայքարում զոհվելու ու առանց գրի՝ միայն վերևի կոկ հարթված տեղում գծանկարով՝ երկսայրի սուր, գորշ-սևավուն կարծր գլաքարից տապանաքար է մնացած (ըստ ավանդության՝ նվիրյալ, բայց անգրագետ հուժկու դարբնի ձեռքի աշխատանքն էր՝ նվիրված շատ աշխատած, բայց չվայելած տիրոջը): Այդ վայրի անունը Կվենք էր (չպետք է շփոթել Մեծ Կվենքի հետ. շատ սովորական երևույթ է տարբեր տեղերում միևնույն անվան կիրառությունը, բայց անվան ծագումը ժողովուրդը կապել է *կիվիների*, կկուների թռչնաշխարհի հետ): Այս տեղանքը հայտնի էր իր հրաշք-բուժիչ աղբյուրով, որը օրգանիզմում գոյացած քարերը քայքայում է: Գերեզմանոցն ինչքան քարուքանդ է արվել, բայց էլի բավականին տարածք է ընդգրկում: Այն հիմնական բնակատեղիին մոտ է՝ գետից բավականին վեր՝ տարբեր թաղամասերով: Ըստ ավանդության՝ այստեղ նույնիսկ եռահարկ տներ են եղել (առաջին հարկը՝ նկուղը՝ բավականին գետնախոր՝ ձմռան պաշար շատ ամբարելու համար. այստեղի տանձի ու սալորի համն ու բույրն այլ էր, իսկ բանջարեղենները մարդաբոյի էին հասնում): Այստեղ ծաղկում էր քարամշակումը, մետաղամշակումն ու առևտուրը, և Պղտորագետի հանրահայտ «արագապտույտ» ջաղացները, որոնք երբեմն տուժում էին գետի ահարկու վարարումներից, բայց միշտ առավել լավով վերակառուցվելով: Այդտեղի եկեղեցին շատ մեծ ու շքեղ է եղել, որից էլ ստացվել է օտարների տված անվանումը՝ արցախյան արտասանվածքով՝ Փիրփայա: *Փիր* պարսկերեն նշանակում է՝ 1. մեծ, 2. ծեր, 3. սուրբ, իսկ *փայա*՝ կովկասյան լեզուներից՝ գոմ, ծածկ: Ուրեմն՝ եկեղեցու պատճառով տեղանքը կոչել են *մեծ սրբատեղի կառուցվածք*: Վերին մասում սրբատեղին՝ Սոմատուն //Մեղսատեղին (հիմա Սչանլու անվամբ) իր գեղատե-



սիլ տափարակով, կենարար օդով անասնապահական ամառանոց է ծառայում:

Կվենքի գինագործական գետամերձ մասը՝ Սև դոլակով, կոչում էին նաև Սև քաղաք, որը սովորական գյուղից տարբերվող բնակատեղի էր, դոլակի, ամրոցի քարերը մեծ չափերով էին, որոնցից հիմա քիչ է պահպանված: Այն ավերվել ու հայաթափվել է շահաբասյան շրջանում և հետագայում: Եկեղեցին հիմնահատակ ավերված էր, իսկ խորհրդային կարգերում խաչքարերի փշրանքներից էլ է զրկվել: Հուշողական սակավ նշխարներ են մնացել: Այս տեղանքի սրբատեղիների ահարկու ջարդը 19-րդ դ. էր՝ քոչվոր, աղքատ՝ սովորական հացի կարոտ, բայց «ազնվագարմ» բեկ-հորջորջվածների կողմից: Պղնձե կթիչներով ոսկի ու արծաթ էին փնտրում (ավանդաբար ասում էին՝ *Երե քղքեցուց Գյանջի դուքյանը յա բզարնը քթիր*):

Պղտորագետի ձախափնյա հաջորդ բնակատեղին Քրահունջն է՝ Գյառավանդը՝ Իմարաթ Քարվենդ //Գրավենդ (կեղծված տեղեկությամբ նշվում է՝ Ելիզավետպոլի նահանգ, Ջևանշիրի գավառ, 1908 թ., 701 բնակիչ.<sup>1</sup> մինչդեռ նրանց գերեզմանոցում նախորդ դարի հիսունականներին մի քանի շիրմաքմբեր էին, որ մանկուց հազար անգամ տեսել ու հիշում են ես՝ տողերիս հեղինակը, իսկ այդքան բնակիչներով գյուղը կես դար հետո մի քանի շիրմաքմբեր չի ունենա, այլ մի քանի գերեզմանոցներ կունենար. նրանք՝ որպես քոչվոր անասնապահներ, մինչև խորհրդային կարգերը, միայն ամառներն էին լինում Պղտորագետի ավազանում. նշված թվականին նրանց ոտնձգությունների դեմ արյունահեղ պայքար է եղել. խորհրդային կարգերի ժամանակ են նստակյաց դարձել այդ տեղանքում): Այս գյուղատեղին գտնվում է մռովալանջ թարթառահայաց տեղանքի՝ Թրղեի ակունքամոտ հովտի ջրբաժան բարձունքի հարավարևմտյան ստորոտում, Պղտորագետի՝ Գյարաքի ձախ ափին՝ Չափարին մերձ (Գետամիջով, ջաղացներով, նոր թաղով կապակցված էին): Հաթերքի հետ վերևով կարճ ճանապարհ կա, որն անցնում է Ենգինջայով, Սպիտակ Ցից քարի մոտով (հայկական հին ու փոքր բնակատեղի), իսկ ներքևի ճանապարհը դեպի Հաթերք Չարդախաչով է անցնում: Այս տեղանքից Գետավանի ուղղությամբ երկու ճանապարհ կա՝ հարավարևմտյան կողմով ջաղացների մոտ միանում է Չափարի ուղուն, իսկ հարավարևելյան կողմով դեպի Բռուշը՝ Փռուշնուտը՝ Բռնչենիները, այնտեղից էլ Գետավան: XIX դարի վերջին ու XX դ. սկզբին Չափարի Գետամիջյան վերին տեղանքում մի քանի քոչվոր քրդեր և այլ խառնածիններ էին տեղակայվել՝ լեզ-

<sup>1</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երեւան 1988, էջ 519 :

գի, այրմ, թուրք, արաբ և մեծ մասամբ ձմռանը տեղափոխվում էին Դաշտային Արցախ: Խորհրդային կարգերում քոչվոր թուրքերից էլ մի քիչ ավելացան արևելյան մասում, որը կոչում էին Քյարամլու: Ըստ իրենց՝ իբր վերջիններս իսկական թուրքեր են: Բոլորն էլ մահմեդականներ էին, բայց մի մասը շիաների, իսկ մյուսը սյունիների ուղղությանն էին հարում: Այս տեղանքում զգալի տեղ էին գրավում ճահճանման ճիլկոտ տարածքները, որոնք ցամաքեցվեցին դարակեսում՝ խորհրդային կարգերում:

Աղբյուրների ջրերը քաղցրահամ չեն՝ հողային, ճահճային ու կրաքարային են: Այդ ջրերը ոռոգման համար օտարազգիները սկզբում չէին գործածում, հետո մասնակի գործածեցին: Արևելյան մասերում շատ փոքր, տիղմախառն, տզրուկով հարուստ լճակ կա, ուր գոմեշներն էին շատ հանգստանում: Ճահճուտի ներքևի լճակը Շիրակի՝ հյուսիս էին կոչում: Այն տիղմախառն և կրաքարային էր, որը թեկուզ չորացվեց մոծակների ու վարակիչ հիվանդությունների առաջն առնելու համար, բայց հետո էլի կիսալճակի վերածվեց:

Որպես խմելու ջուր՝ բնական չորս աղբյուր կա այս տեղանքում: Երկուսը վերև՝ արևելյան և արևմտյան կողմերում, երկուսը՝ ներքև՝ Պղտորագետի Գյարաքի ձախ կողմում: Մեկը բարձրադիր փլվածքի մոտ է, մյուսը՝ ցածրադիր: Մի քանի տեղ ջուրը աղբյուր չէր դառնում՝ ճիլկոտ էր մնում, որը երաշտ տարներին մեծ մասամբ, իսկ սովորական տարիներին՝ մասամբ ամռանը ցամաքում էր:

Այդ եկվորներն անասնապահությամբ, հետո այգեգործությամբ, իսկ 50-ականներից հետո սակավ հողագործությամբ էին զբաղվում: Բնական է, բանջարանոցաբոստանային կուլտուրաներ ու հացահատիկ խորհրդային կարգերում հայերի հետ են մշակել: Քարահունջի հին շինությունների՝ եկեղեցի, մատուռ, տներ, մնացորդ սպիտակավուն սալաքարերն ու կանաչակապտավուն անկյունաքարերը XX դ. 30-ականներից անխնա գործածել են բուժկետ, պահեստ, վարչական գրասենյակ ու սեփական տներ կառուցելու համար՝ հայ դեկավարների ու որմնադիրների միջոցով: Խաչքարերն ու գրավոր շիրմաքարերը նրանցից առաջ՝ իրոսակ այլադավան զինվորների կողմից հիմնահատակ ջարդված, ավերված, ոչնչացված էին: Միայն ներքևի հին գերեզմանոցի սահմանափակ առանց գրի շիրմաքարեր, դամբարան ու մի խաչքար էր մնացել: Վերջինս էլ Արցախյան գոյապայքարի ժամանակ անհետացավ: Այդ գերեզմանոցը երեք տնջրուց քիչ վերև է: Ներկա ժամանակում կամուրջից վեր բարձրացող ճանապարհի բլրագագաթն է: XX դարի 60-ականներից այդտեղի քուրդ-թուրքերը այդ խաչքարը հաշվում էին իբր իրենց քրիստոնյա նախնիների՝ ալբանադավանների հիշատակ, որոնց հետ իրականում ոչ մի կապ չունեին (այդ

խաչքարը ֆիզիկայի ուսուցիչ Սաղյան Սուրենը ցանկացավ տեղադրել Քլունփվի ճանապարհի Տկողնուտի աղբյուրի մոտ, որպես իր տղայի՝ 1974թ. խորհրդային բանակում նահատակված Ռազմիկի//Փ/Ֆարադեյի հուշաղբյուրի խաչքար. այդ այրմ-քուրդ-թուրքերը զարմանալի վայնասուն բարձրացրին, որ իբր իրենց սեփականությունն է): Այդտեղի գերեզմանոցը չափարցիք կոչում էին ճղցտերերի գերեզմանուտը, իսկ ջաղացատերերը Պղտորագետին մերձ Չափարի ու Քրահունջի թաղամասերի կիսաունևորներն էին: Արցախյան գոյապայքարի ընթացքում, ինչպես նշեցինք, այդ խաչքարը, որի բոլորքում նաև երկաթագիր կցագրությամբ հայատառ գրություն կա, անհետացել է: Հիմա այդ տեղանքը հայկական թաղամաս է:

Խորհրդային կարգերում՝ XX դարի 30-ականների վերջերից մինչև 70-ականների սկիզբը Քրահունջի այլազգիների փոքրաթիվ երեխաները հայերի մեծաքանակ երեխաների հետ մեկտեղ նույն դպրոցն էին գալիս (Չափարի արդի դպրոցը): Այնուհետև հայ աշակերտների քանակը սկսեց կտրուկ նվազել, իրենցն աճել: Խորհրդային կարգերից առաջ ու հետո ոչ մի ազգային կառույց չունեին: Նախախորհրդային կարգերում, այդ մի բուռ քոչվորականները հայերի մոտ իրենց *բեկ* էին կոչում, որը զարմանալի էր. մի տեղանքում քանի՞ բեկ կլինի (երևի ոչ կախյալ քաղաքացի լինելու անձի ինքնուրույնությունը հաստատող փաստաթղթային քաղաքավարական արտահայտություն էր, ինչպես՝ *քաղաքացի, պարոն*, որը ոմանք շփոթում են *բեկ* տիտղոսի՝ *ազնվականի* հետ, ինչպես թուրքերենում՝ *աղա*. Բյազյաց/նց դյուզ տեղանքը շատերը կարծում են թե դրանցն էր, նրանք այն ժամանակ հող չէին մշակում, մինչդեռ Բյազյին Սաղուն ավազ տղան էր ու այդ տեղանքը նրա արտատեղն էր): Նրանք հետո այնքան շատ ավելացան (երկու կին պահելը և յոթից ավելի երեխա ունենալը սովորական երևույթ էր), որ 70-ականներից նոր դպրոց կառուցեցին: Այդ կառույցի քարերը հիմնականում Մարտակերտից գնված սպիտակ կրաքարային ուղղանկյուն երկարավուններն էին՝ կուբիկ (*կուբիկ* ռուսերեն՝ խորանարդ): Գոյապայքարի ժամանակ դրանք լրիվ կործանվել են, և այդ քարերը մասամբ գործածվել են Չափարի ավերված տները վերականգնելիս: Քրահունջը հայերեն սովորական բառ է, առաջացել է Քարե կամուրջ կապակցության արտակարգ հնչյունափոխությունից: Քարե մեծ կամուրջ է եղել Պղտորագետի ընկուզենիների թավուտում, որից ոչինչ մնացած չկա: Քանի որ այդ գետն ընդգրկում է Մռովի ու Մանանասարի զգալի լանջերը, ուստի ուժեղ տեղատարափների ժամանակ ահավոր չափերով վարարում է, և կամուրջը բարձր չլինելով, տապալվում էր, այդպես նաև բազմաթիվ ջաղացներ է քշել:

Քրահունջ տեղանուն կա նաև Հաթերքի արևմտյան մասում, որն այս տեղանքի հետ կապ չունի (սովորական երևույթ է միևնույն անվանումը բազմազան պատճառներով տարբեր տեղեր գործածելը):

Պղտորագետի գետաբերանի մոտ է նորակառույց Գետավանը, որը Գետի// Կյետի՝ Տրտուի՝ Վաղուհաս գետի ու Պղտորագետի խառնվելու տեղանքին կից, ձախափնյակում եղած Փայտամշակման գործարանի պատճառով կառուցված բնակավայր է (կամուրջի մոտ՝ աջափնյակում՝ Վաղուհասի հանդամասում ևս մի քանի տներ ու կիսավեր կառույցներ կան): Որպես գյուղ՝ հիմնվել, զարգացել է նախորդ դարի երկրորդ կեսում, չափարցիների անասնապահական ձմեռանոցների՝ խորհրդային կարգերում համայնացնելուց հետո՝ հին Կարմունջ՝ Կամուրջ, Կյետ // Գետ տեղանունը դարձնելով հնչել Գետավան (մինչև նախորդ դարի կեսը չափարցիների համար Գետ // Կյետ հասկացությունը Տրտուն ու նրա հովտի հանդամասերն ու անասնապահական տեղանքներն էին նշանակում): Միջնադարում Դոփյանների կողմից կառուցված նախկին կամուրջը քանդվել էր (մի քանի մետր վեր՝ մի մասի մնացորդը մինչև հիմա երևում է ժայռակտորի վրա): Ներկա կամուրջի կառուցումն ավարտվել է 1942թ.՝ աշդեկը չափարցի Մարտիրոսյան Ջալալն էր, որն էլ հենց ընտանիքով տեղափոխվում է այդտեղ՝ Չափար գյուղում իբր նոր կառուցվելիք բնակարանի տեղ չունենալով (այդ ժամանակից էլ երբեմն ռուսերեն անվամբ էին գործածում՝ Սոսո): Փայտամշակման գործարան ունեցող այս տեղանքը, գտնվելով հանրապետական արժեք ունեցող մայրուղու վրա, շատ էր բանուկ ու Տրտուի՝ Թարթառի՝ Կյետի հովտի ամենալայն մասի մոտ էր: Այդ տեղանքն առաջ Ցաքյուտ՝ Մացառուտ հանդամաս էր կոչվում, որը թարթառամերձ, ռոռոզովի ու շատ տաք տեղն էր, և դրա կեսը խոտհարքի, կեսը՝ բանջարանոցի, հետո էլ ծխախոտի մշակման տեղանք էր ծառայում: Ջաղացն այդ ժամանակ արդեն լուծարված էր: Դեպի Չափար բարձրացող ճանապարհի աջ կողմում հիմա դպրոցն է, որի մոտ դեռ մնում է նախորդ դարի Չափարի կոլտնտեսության վերջին անասնապահական ձմեռանոցի ֆերման: Վարչական կենտրոնը սկզբից Չափարի հետ էր, բայց Արցախյան գոյապայքարի ժամանակ առանձնացավ, իսկ տիպային դպրոցը կառուցվել է նախորդ դարի 80-ականին: Ընդհանրապես այդ դպրոցի մոտի բլրից սկսած՝ մինչև Փարսուց կամ Կոտրած եխժեն, Օթաղեն քարը՝ ժայռախուցը, ճանապարհին կից տեղադրված են եղել չափարցի գերդաստանների մեծ մասի անասնապահական ձմեռանոցները, որը գոյատևել է մինչև նախորդ դարի 30-ականները՝ հանրայնացման տարիները:

Գետավանի տները, տնամերձ հողամասերը, դպրոցը, հանդամասերը Չափարի՝ Թարթառի բարեբեր հովտի հանդամասերի հաշվին է առանձնացվել, ու բնակչության մեծ մասը չափարցիներ են, որոնց գերակշռող մասը եկեղեցու մոտի հին թաղամասից նախորդ դարի 60-ականներին տեղափոխվածներն են, նոր թաղամասից քիչ են տեղափոխվել:

Արցախյան գոյապայքարի ժամանակ այստեղ ևս ձերբակալություններից տուժածներ, նահատակներ, անհայտ կորածներ եղան, որոնց մեծ մասն էլի չափարցիներ էին: Օրինակ՝ Օթաղի քարի՝ ժայռախուցի մոտի՝ Չագունանց տեղանքում՝ Քյոթուզի բողազումը, եղած միջադեպից՝ ազերիների երթուղային ավտոբուսի պայթեցումից հետո՝ ազերիների դրոմամբ, ռուսական բանակի զինվորները Արթուր Միշայի Թամրազյանին ձերբակալեցին, Աղդամ, հետո Բաբու տարան, երևի որպես ռուսական գրանցում ունեցողի ու ռուսերեն լավ իմացողի, ցանկացել էին շատ լուրեր կորզել. այդ երիտասարդը գազանաբար հոշոտվել է, իսկ չորս հոգու՝ Միշա Դադաչի Թամրազյանին (Արթուրի հորը, տարիքով, աշխույժ, կատակասեր, կուզիկ մարդ, որը հետո Երևան-Ստեփանակերտ փոքր ինքնաթիռի վթարի ողբերգական զոհերից դարձավ՝ ազերիները հրթիռակոծել էին չվերթի ժամանակ), Գարիկ Չավենի Գրիգորյանին, Ազո// Մելսիկ Սամվելի Արշակյանին և Էլխան Պողոսի Դանիելյանին (վերջին երկուսը Չափարում էին ու են բնակվում): Նրանց բանտարկել էին և ուղարկել Ստեփանակերտ: Արկադի Վոլսկու միջամտությամբ այս մարդկանց ազատեցին անլուր խոշտանգումներից: Երկու անգամ ևս Գետավանը բռնագաղթվեց ու թափով զարգացումը հետաճեց (դեպի արևմուտք կառուցված վերջին տները՝ տնջրու՝ սոսու՝ չինարու մոտ, հասնում էին Ներքե Շենի թաղամասին ու խորհրդային կարգերում այդտեղ պատրաստված Չափարի գոմեշների ձմեռանոցին ու հավերի ֆերմային, իսկ հիմա այդ նորակառույց տների մի մասն ավերակ է): Գետավանի միջով ձգվում է ասֆալտե ուղին՝ դեպի Քարվաճառ: Ասֆալտից Չափար բարձրացող խճապատ ուղին Մեծ ճանապարհի աջ կողմից է թեքվում՝ կենցաղի տան ու դպրոցի շենքի մոտից, որի անկյունում տնկած ճանապարհանիշը վաթսուևվեց է՝ հիմա պոկված է (Մարտակերտից այդտեղ եղած հեռավորությունը 66 կմ է): Չափարցի հերոս տանկիստ նահատակ Վիտյա// Վլադիկ Գրիշայի Սարգսյանը Վաղուհասի կողմում գտնվող ազերիներին այդտեղից կրակահերթի տակ պահողն էր (երեք տանկ շարքից հանել էր ու ռացիայով հայտնում էին «Վիտյան վաժնուկեցան թխըմ ա»): Այդ մասը պատերազմի ժամանակ նաև կոչում էին ու հիմա էլ երբեմն կոչում են Վաթսուևվեց ու հիշում նշված միջադեպը: Գետավանով անցել ու կարճ գործ է ձեռնարկել նաև լեգենդար Ավոն՝ Մոնթե Մելքոնյանը: Գետավանի և

այդ ծորակի երկրորդ ազատագրմանը հիմնականում մասնակցել է Սեյրան Օհանյանի գլխավորած վաշտը: Դպրոցի մուտքի սրահում նահատակների անկյունն է՝ հուշատախտակին փակցրած նկարներով, որոնց մեծ մասը չափարցիներ են:

Պղտորագետի ավազանի նշված բնակատեղիներում եղել են եկեղեցիներ, որոնցից անհուշ է մնացած Քարահունջի եկեղեցին, իսկ ճղցտերերի գերեզմանոցի մատուռը հիմնահատակ քանդվել է նախորդ դարի վաթսուհանգամանին՝ ծխախոտի պլանտացիան տրակտորով մշակելիս:

Գետավանից դեպի Հաթերք գնացող ուղու վրայի՝ փոքր կամուրջից հինգ հարյուր մետր դեպի արևելք, հեթանոսության շրջանից մնացած Փռուշնուտի հնամենի սրբատեղիում քրիստոնեության ժամանակ վանք էր վերակառուցվել, որը կոչվել է Սովսես Խորենացու անվամբ՝ Մյասունց վանք: Ըստ ավանդության, իբր այդտեղ եղել է Սովսես Խորենացին, որը նաև տեղի ջաղացի ամենաարդար աշխատողն է ճանաչվել (այդ ջաղացն իբր վանքապատկան էր, բայց նաև չափարցիներինն էր՝ նրանց անասնապահական ձմեռանոցների արանքում էր, երբեմն վաղուհասցիք առնում էին. խորհրդային կարգերում վերջին ջաղացպանը չափարցի կարգաթող տերտեր Հայրապետ // Երվանդ Խաչատուրի Մինասյանն էր՝ տողերիս համեստ ծառայի պապը. այդ ջաղացի փլեկները ոչնչացվել են նախորդ դարի կեսերին. հիմա տեղը բանջարանոց է՝ Պղտորագետի աջափնյակի վերջին տների մոտ): Այդ վանքում ու ջաղացում եղել է նաև Մխիթար Գոշը՝ իշխանանիստ Հաթերքում հյուրընկալվելիս ու Դադի վանք երթևեկելիս: Մյասունց վանքից, որը նաև իջևանատուն է եղել, մնացած պատերն իսպառ ոչնչացվել են նախորդ դարի յոթանասուհանգամաններին, իբր ճանապարհը բարեկարգելիս ու ընդլայնելիս խանգարել է, իսկ փռուշնուտի՝ սուրբ ծառ համարվող բռնչեմիների թփուտներն առ այսօր էլ աճում են ճանապարհի վերին եզրի խճախառը տեղանքներում՝ Բռուշի տափարակի՝ մեծ դաշտի ներքևի ծայրում՝ Պղտորագետի աջափնյակում:

Պղտորագետի ավազանը հարուստ էր ջաղացների քանակով: Ավանդությունը պատմում էր, որ Տրտուկի հովտի ամենաջաղացաշատ վտակը Պղտորագետն էր: Քաղաքատեղից մինչև Տրտուն յուրաքանչյուր քայլի վրա ջաղաց կար, որոնց երբեմն քշում էր ահավոր հեղեղներից հորդացած, ակերից վայրագորեն ելած Պղտորագետը, բայց փոխարենը նորից ավելի լավն էին կառուցում: Ամենաորակյալ նախագծով ջրանցք անկացնել տվողը եղել է չափարցի Խութանց Դավիթը՝ Դավիթ Սարգսի Դանիելյանը, որին կուլակաթափության տարիներին անհարկի բռնադատեցին: Այդ ջրանցքն այնպիսի բարձրությամբ էր Պղտորագետից վերցված ու Մանանասարից արևելք ձգված բազուկի արևելյան գառիթափ լանջով

անցկացված, Չափար գյուղի Գետամիջով բերած, Արիքլի գետակին խառնած, որ երկհարկանի ջաղացներ էին աշխատում (վերջին երկհարկանի ջաղացները նախորդ դարի վաթսունականին ու ութսունականներին են լուծարվել՝ խանութները պատրաստի այլուրի պարկերով ապահովելուց հետո. Չափարում ութսունականին էլեկտրաղաց էր կառուցվել, բայց այլուրը անորակ էր ստացվում, ուստի այդտեղ անասնակերային *արդոն* էին աղում, իսկ ջաղացում՝ հացի այլուրը):

Արցախյան գոյապայքարի հաղթանակից հետո Չափարում վերականգնվեց ներկայիս միակ ջաղացը՝ նախկին երկհարկանիի տեղում՝ դպրոցից ներքև, գյուղամուտ ճանապարհի եզրին, որը հիմա հազվագյուտ է գործում (այն աշխատում է Դանիելյան Դավթի նախագծած ջրանցքով բերվող ջրով):

#### РЕКА ПХТОРАГЕТ И ЕГО БАССЕЙН

Сильва Минасян

#### Резюме

Река Пхторагет-Гярак будучи вторым притоком Трту берет начало с западных склонов горы Мрав и имеет большой бассейн. Его притоки Ариклу и Акнаджур – Дагнак сливаются у нового жилого квартала села Чапар. Оба названия этой реки имеют армянское происхождение.

В статье дается географическая характеристика реки и приводятся исторические сведения и этимология местностей, расположенных в его бассейне.

#### THE RIVER PGHTORAGET AND ITS BASIN.

Silva Minasyan

#### Summary

River Pghtoraget-Gyarak being the second influx of Trtu originates from the western slopes of Mount Mrav and has a large swimming pool. Its tributaries Ariklu and Aknadzbur-Dagnak merge with the new residential area of the village of Chapar. Both names of this river are of Armenian origin.

The article provides information with the geographical description of the river, the historical background and etymology areas located in its basin.